

## Վ Ա Ն Ա Ն Թ Է Ք Է Ե Ա Ն

1878-1945

Մերի նմուշով է որ կ'արձանագրենք հոս մահը Մեծանուն Բանաստեղծ՝ Վահան Թեփեանի: Հայ Գրականութիւնը յանձին Թեփեանի կ'ընէ իր ծանրագոյն կորուստներէն մին: Նդերաբախտ սերունդի մը ցանցառ ազատողներէն այս ուշագրաւ դէմքն ալ կ'անհետանայ մեր գրական անդասանէն՝ լցեալ արդեսմբ եւ փառօք:

Կորուսին արձագանգը Հայ Գրականութեան բոլոր ջոշանակներուն մէջ եւ անոր ծնունդ տուած բազմասեակ արայայութիւնները բաւ են արդարացնելու այն շեղ համակրանքը, որով լեցուած անոր հոգին կը մտնէ անմահութեան աւազանը, իր Աստծոյ:



Վահան Թեփեանն ոչ միայն մեծարժեք Բանաստեղծ մըն է, այլ եւ այս ժողովուրդի ամենէն հաւազաս փառքերէն մէկը: Աւելի քան քսան տարի անիկա ապրեցաւ հայոց բանաստեղծութեան իփսանք ինչպէս, ստեղծելով ոչ միայն իր գեղեցիկ գործը, այլ եւ Հայ Դպրութեանց այս նսնձ օրերուն, մեր իմացական արժեքներու նրկասմամբ որոշ շահեկանութիւն:

Կը ծայրակցինք հասարակաց խանդավառութեան հիացումին, եւ իր յեռասակը մեծնշեցաւ որով ձեռնարկներուն կը մաղթենք յաջողութիւն:

Ի յուշ Մեծանուն Բանաստեղծի սնդարմանելի մահուան, Ապրիլ 21-ին ժառ. Վարժարանի Լսարանին մէջ տարեկան յիշատակի երեկոյք մը: Խօսեցաւ մեծանուն գրագէտ եւ քննադատ Յ. Օսական, արխոստանով եւ արցունքով պանծացնելով յիշատակը իր գրչի եղբօր եւ սիրելի բարեկամին: Նշան երգեր եւ արաստանութիւններ՝ բոլորն ալ հանգուցեալ Մեծ Քերթովին:

Իսկ Մայիս 13-ին Կ. Մ. Շ. Ա.-ի մեծ Հանդիսատարին մէջ, նախագահութեանը ներքեւ Ամեն. Պատրիարք Հօր՝ 15 Միութիւններ Մեծանուն Բանաստեղծի քառասունհինգ տարի կաշակչեպցինք փառաւոր սլահանդէս մը. եղան երգեր եւ արաստանութիւններ, խօսք առին Պր. Յ. Օսական եւ Հոգ. Տ. Նիկիւք Վրդ. Տերտերեանը: Նորին Ամեն. Պատրիարք Հայրը որ կը նախագահէր սգահանդէսին՝ դուռնալից խօսքերով պանծացուց ու օրհնեց Մեծ Բանաստեղծին եւ Հայուն յիշատակը՝ որ կը մեռնէր այսպէս իր փառքին մէջ եւ իր ժողովուրդի բոլորանուէր սիրոյն առարկայ:

Օրհնենք իր յիշատակին: